ք.Երևան «19» օգոստոսի 2022թ.

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ԱԿՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի օգոստոսի 22-ից հոկտեմբերի 05-ը ներառյալ անցկացնել խրախուսական ակցիա «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) «EasyWallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի համար՝ ի ապահովում էլեկտրոնային դրամապանակի տիրույթում գործարքների քանակի ավելացումը խրախուսելուն:
2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված ակցիայի պայմանները հաստատել սույն հրամանի հավելվածով:
3. Սույն հրամանը գործում է գործում է մինչև դրանով սահմանված գործընթացների ամբողջական կատարումը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունն ապահովել Ընկերության կոմերցիոն տնօրենին:

Տնօրեն /_____/ Մ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 2022/023 հրամանի

«EasyWallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի համար անցկացվող «100-ից 1» ակցիայի կանոններն ու պայմանները

1.1. Սույն կանոններով կարգավորվող ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից կազմակերպվող **«Easy Wallet»** ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային դրամապանակ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի քանակը, նրանց կողմից էլեկտրոնային դրամապանակով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել **«Easy Wallet»** ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:

1.2. Սույն կանոններով սահմանվում են էլեկտրոնային դրամապանակի բջջային հավելվածը ներբեռնած գործարկած օգտատերերի կողմից էլեկտրոնային դրամապանակում գրանցված հաշվառման հաշվից էլեկտրոնային դրամապանակում գրանցված ապրանքների ձեռքբերման և/կամ ծառայությունների մատուցման դիմաց 5,000 /հինգ հազար/ ՀՀ դրամ և ավելի վճարումներ կատարելու դեպքում և/կամ առևտրի և/կամ սպասարկման կետերում «QR» կոդի միջոցով 2,000 /երկու հազար/ ՀՀ դրամ և ավելի վճարումներ կատարելու դեպքում յուրաքանչյուր հերթական հարուրերորդ վճարման դիմաց էլեկտրոանյին դրամապանակ օգտատիրոջը «Easy Coin» միավորներով արտահայտված շահում (1 միավոր = 1 ՀՀ դրամ կանոնով) ստանալու կարգը:

1.3. Ակցիան գործում է 2022 թվականի օգոստոսի 22-ի ժամը 09:00:01-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ժամը 23:55:59-ը:

1.4. Սույն կանոնների 1.2 կետի իմաստով էլեկտրոնային դրամապանակի տիրույթում ներառված ապրանքների ձեռքբերման և/կամ ծառայությունների մատուցման դիմաց սույն կանոնների 1.3 կետով սահմանված ժամկետում 5,000 /հինգ հազար/ ՀՀ դրամ և ավելի չափով վճարումների կատարման յուրաքանչյուր հերթական հարուրերորդ վճարումը կատարող էլեկտրոնային դրամապանակի օգտատիրոջը կտրամադրվի շահում 5,000 միավորի (համարժեք է 5,000 ՀՀ դրամին՝ 1 միավոր = 1 ՀՀ դրամ կանոնով) չափով:

1.5. Սույն կանոնների 1.2 կետի իմաստով էլեկտրոնային դրամապանակի տիրույթում ներառված առևտրի և սպասարկման կետերում սույն կանոնների 1.3 կետով սահմանված ժամկետում «QR» կոդի միջոցով 2,000 /երկու հազար/ ՀՀ դրամ և ավելի չափով վճարումների կատարման յուրաքանչյուր հերթական հարուրերորդ վճարումը կատարող էլեկտրոնային դրամապանակի օգտատիրոջը կտրամադրվի շահում 10,000 միավորի (համարժեք է 10,000 ՀՀ դրամին՝ 1 միավոր = 1 ՀՀ դրամ կանոնով) չափով:

1.6. Ակցիային կարող են մասնակցել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրոնային դրամապանակի նույնականացված հաշվառման հաշիվներ:

1.7. Շահումները որոշվում են Էլեկտրոնային դրամապանակի տիրույթում ներառված ապրանքների ձեռքբերման և/կամ ծառայությունների մատուցման դիմաց, ինչպես նաև առևտրի և սպասարկման կետերում «QR» կոդի միջոցով կատարված գործարքների քանակի պարզ հաշվարկով՝ յուրաքանչյուր հարուրերորդի կանոնով:

1.8. Էլեկտրոնային դրամապանակի շահող հանդիսացող հաշվառման հաշվի օգտատերը ծանուցվում է շահումի մասին անմիջապես՝ Էլեկտրոնային դրամապանակի տիրույթում ուղարկվող ծանուցման միջոցով: Շահումները հաշվեգրվում են Էլեկտրոնային դրամապանակի շահող հանդիսացող հաշվառման հաշվի համապատասխան բաժնում մինչև շահումի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 23:59-ը:

1.9. Ակցիային մասնակցում են բացառապես կատարված և հաստատված գործարքները, այսինքն վճարում կատարելու փորձ հանդիսացող, ինչպես նաև ցանկացած պատճառով մերժված կարգավիճակով գործարքները չեն մասնակցում Ակցիային:

1.10. Ակցիային մասնակցում են միայն սույն կանոնների 1.4 և 1.5 կետերով սահմանված գործարքները:

1.11. Ակցիային չեն մասնակցում Էլեկտրոնայն դրամապանակի հաշվառման հաշվի համալրմանն ուղղված գործարքները անկախ համալրման աղբյուրից, Էլեկտրոնայն դրամապանակի հաշվառման հաշիվների միջև գումարի փոխանցումների գործարքները, ինչպես նաև սույն կանոնների 1.4 և 1.5 կետերով սահմանված գործարքներ տեսակներից տարբերվող ցանկացած այլ գործարք:

1.12. Ակցիայի ընթացքում Էլեկտրոային դամապանակի միևնույն հաշվառման հաշվի կողմից շահումների քանակի սահմանափակում չի գործում:

1.13. Ակցիայի շրջանակներում ստացած միավորները վավեր են նաև Ակցիայի ավարտից հետո:

1.14. Ակցիային կարող են մասնակցել սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող բոլոր այն օգտատերերը, ովքեր ծանոթանալով սույն կանոններին ընդունում և համաձայնվում են նշված կանոնների հետ՝ համապատասխան ծրագրային հրահանգով անցում կատարելու միջոցով:

1.15. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Ընկերության կողմից՝ խմբագրված տարբերակը Ընկերության պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում գործող պաշտոնական էջերում հրապարկելու կամ համապատասխան հղմամբ ներկայացվելու միջոցով:

1.16. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:

1.17. Սույն կանոնները և մրցույթը գործում են սույն կանոնների 1.3 կետում նշված վերջնաժամկետի և սույն կանոնների 1.8 կետով սահմանված հաշվեգրման առավելագույն ժամկետների հաշվարկով: